Պայմանագիր N 1042

Ք. ԳԱՎԱՌ_ «08» «Հունիսի» 2016 թ.

Աղբահանության ծառայություն մատուցող «*Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում*» ՀՈԱԿ, այսուհետ Կատարող, ի դեմս կազմակերպության ղեկավար —*Յուրիկ Մինասյանի*, որը գործում է կանոնադրության հիման վրա մի կողմից « *Գավառի բազմաբնակարան շենքերի ՏՊԸ* » *Ի դեմս* տնօրեն՝ *Ռ. Զաքարյանի*, որը գործում է կանոնադրության (կամ լիազորագրի), հիման վրա, այսուհետ Պատվիրատու, մյուս կողմից (երկուսը միասին Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն պատվիրում է, իսկ Կատարողը պարտավորվում է իր ուժերով ու միջոցներով կամ սահմանված կարգով իր կողմից ընտրված մասնագիտացված կազմակերպության (ենթակապալառուի) ուժերով ու միջոցներով իրականացնել Պատվիրատուի բնականոն գործունեության հետևանքով առաջացած աղբի հավաքման, փոխադրման, պահման, հեռացման, վնասազերծման և թաղման հետ կապված աշխատանքները. ՀՀ օրենսդրությամբ սահմանված թափոնների տեղադրման սահմանաքանակներին համապատասխան, դրանց գոյացման, տեղադրման կամ պահման վայրերից համայնքի կողմից սահմանված աղբավայր՝ համայնքի ավագանու կողմից հաստատված կարգին, գրաֆիկին և նորմաներին և աղբահանության քարտեզին համապատասխան: Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայության դիմաց սույն պայմանագրով սահմանված չափով, կարգով ու ժամկետներում:

1.2 Կատարողը պարտավորվում է ապահովել աղբի հավաքման ու փոխադրման համար նախատեսված՝ համայնքի կողմից հաստատված նմուշի աղբարկղերի, աղբամանների, կոնտեյներների (այսուհետ՝ Արկղեր) (այն չենթադրում, որտեղ չկան աղբատար խողովակներ, կամ աղբի հավաքումը չի սպասարկվում շրջիկ ավտոմեքենայով) տեղադրումը, դրանց սարքին վիճակում պահելը, աղբի հեռացումից հետո դրանց շրջակայքի մաքրության ապահովումը, նշված Արկղերի պարբերաբար ախտահանումը՝ համապատասխան լվացող և մաքրող նյութերով:

1.3 Կողմերը սույն պայմանագրի շրջանակներում ղեկավարվում են ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության որոշումներով, համայնքի ավագանու, քաղաքապետի որոշումներով և այլ իրավական ակտերով:

1.4 Աղբի բեռնումը Արկղերից և աղբատար խողովակների բունկերներից բեռնատար (աղբատար) մեքենաներ կատարվում է Կատարողի կամ նրա կողմից մրցութային կարգով ընտրված ենթակապալառուի կողմից:

1.5 Տեղափոխման ենթակա աղբի քանակի որոշման համար ելակետային տվյալներ են հանդիսանում սպասարկման ենթակա տարածքում, օբյեկտում համայնքի ավագանու կողմից հաստատված աղբի գոյացման միջինացված նորմատիվները:

1.6 Կատարողի/ենթակապալառուի հետ համաձայնեցված վայրից մեծածավալ/մեծամասշտաբ աղբի հավաքումն ու փոխադրումը կատարվում է Պատվիրատուի լրացուցիչ պատվերի հիման վրա՝ ծառայության համար գանձվող առանձին վճարի դիմաց:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

Կատարողը պարտավոր է

2.1.1 Պատշաճ ապահովել Պատվիրատուի բնականոն գործունեությունից առաջացած աղբի հավաքումն ու փոխադրումը՝ բազմաբնակարան շենքերի համար առնվազն _2 (երկու)_օրը մեկ անգամ, անհատական բնակելի տների, առանձնատների համար՝ առնվազն __3 (երեք) օրը մեկ անգամ: Պարտավորությունների պատշաճ կատարում նշանակում է, որ աղբը հավաքվում և տեղափոխվում է կողմերի միջև համաձայնեցված օրերին ու ժամին, համապատասխան վայրից և որ աղբի հավաքումից և տեղափոխումից հետո Արկղերի հրապարակում (շրջակայքում) չկա այս ու այն կողմ ցրված/թափթփված աղբ:

2.1.2 Ապահովել Պատվիրատուի լրացուցիչ պատվերով ոչ վտանգավոր, մեծածավալ/մեծամասշտաբ աղբի հավաքումն ու փոխադրումը, եթե դրանք տեղակայված են սույն պայմանագրի 1.6 կետի պահանջներին համապատասխան:

2.1.3 Ունենալ համապատասխան քանակությամբ Արկղեր, որոնք կհամապատասխանեն աղբի կուտակման չափին ու հեռացման հաճախականությանը (եթե չկան աղբատար խողովակներ կամ աղբահանության կազմակերպումը չի ապահովվում շրջիկ ավտոմեքենայով):

2.1.4Մեծածավալ/մեծամասշտաբ աղբի հավաքումն ու փոխադրումը կատարվում է ըստ անհրաժեշտության, աղբի Մեծածավալ/մեծամասշտաբ աղբը հավաքվում, պահվում են կատարողի կողմից նշված ծևով, փոխադրման համար մատչելի վ կուտակման ծավալին համապատասխան, բայց ոչ ուշ քան լրացուցիչ պատվերի օրվանից հաշված 3 օրվա ընթացքում: այրում ու նպաստավոր վիճակում:

2.1.5 Տեղադրված Արկղերը պահել մաքուր վիճակում, շահագործման համար ոչ պիտանի դարձածները փոխարինել նորերով համայնքի կողմից սահմանված ժամկետներում՝ դրանց ներկայացվող պահանջներին համապատասխան:

2.1.6 Ինքնուրույն կամ ենթակապալառուի միջոցով իրականացնել ցրված/թափթփված աղբի հավաքումն այն տարածքից, որն աղտոտվել էր Արկղերի բեռնման/բեռնաթափման աշխատանքներից հետո:

2.1.7 Պատվիրատուին հստակ տեղեկատվություն տալ այն պաշտոնատար անձանց և նրանց դիմելու ձևերի ու միջոցների մասին (պաշտոնատար անձանց գտնվելու վայր, հեռախոսահամարներ), որոնց Պատվիրատուն կարող է դիմել աղբահանության ժամանակ թերություններ արձանագրելիս:

2.2Կատարողն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել՝

2.2.1. Աղբը Արկղերի կամ աղբատար մեքենայի մեջ լցնել համայնքի կողմից սահմանված ձևերով:

2.2.2 Պայմանագրային պարտավորությունների խախտումների համար վճարել տուգանքներ հետևյալ չափերով՝

ա/ համայնքի կողմից չսահմանված և (կամ) չնախատեսված տեղերում ու նշված վայրերում՝ աղբամուղներից, բունկերներից, Արկղերից, աղբահավաք մեքենաներից, ինչպես նաև սահմանված կարգով կազմակերպված կամ նախատեսված աղբավայրերից դուրս աղբ թափելու դեպքում, պատվիրատուն պարտավոր է վճարել տուգանք,

Հայաստանի Հանրապետության «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքով սահմանված չափով ու կարգով:

բ/ Սույն պայմանագրի 2.1.2 կետում նշված աղբը 1.6 կետի պայմանի խախտմամբ տեղադրելու/թափելու դեպքում՝ **500** դրամ յուրաքանչյուր խորանարդ մետր աղբի համար:

գ/ Սույն պայմանագրի 2.3.3 կետի պահանջը խախտելու համար լրացուցիչ վճարել **1000** դրամ չտեղեկացման յուրաքանչյուր դեպքի համար:

2.3. Պատվիրատուն պարտավորվում է՝

2.3.1 Վճարել սույն պայմանագրի 2.1.1 կետին համապատասխան մատուցված ծառայության վճարը մինչև հաշվարկային ամսվան հաջորդող ամսվա 10-ը, Հավելված 1-ում նշված չափով:

2.3.2. Արկղերի մեջ չլցնել շինարարական աղբ, վտանգավոր, արգելված, հեղուկ թափոններ:

2.3.3. Սույն պայմանագրի 2.1.2 կետին համապատասխանող թափոնները 1.6 կետին համապատասխան տեղակայելուց առաջ կապի որևէ միջոցով տեղեկացնել Կատարողին (համապատասխան բաժնի վարիչին կամ մասնագետին):

2.3.4. Լրացուցիչ պատվերի օրը 2.1.2 կետին համապատասխան ոչ վտանգավոր, մեծածավալ/մեծամասշտաբ աղբի հավաքման և փոխադրման դիմաց մեկ խորանարդ մետրի համար վճարել Հավելված 1-ում նշված չափով:

2.3.5. Աղբը տեղաբաշխել միայն համայնքի ավագանու կողմից սահմանված վայրում (Արկղերի կամ շրջիկ աղբատար մեքենայի մեջ:

2.3.6. Չտեղափոխել, չտեղաշարժել, չտեղահանել կամ չշրջել Արկղերը:

2.3.7. Տեղյակ պահել Կատարողին Պատվիրատուի մոտ տեղի ունեցած այն փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդել աղբի ծավալի վրա, փոփոխություն կատարելու օրվանից հաշված մեկ շաբաթվա ընթացքում:

2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.4.1.Ստուգել Կատարողի կամ նրա ենթակապալառուի կողմից մատուցված ծառայությունների որակը, համապատասխանությունը համայնքի կողմից հաստատված գրաֆիկին ու կարգին: Հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմել համապատասխան փաստաթուղթ/ակտ համայնքի ավագանու կողմից հաստատված ձևին համապատասխան և ներկայացնել Կատարողին թերությունների հայտնաբերման օրվան հաջորդող օրը: Կատարողը պարտավոր է հայտնաբերված թերությունները վերացնել համապատասխան փաստաթուղթը ստանալու հաջորդ օրացուցային օրը:

2.4.2. Ժամկետից շուտ վճարել սույն պայմանագրով սահմանված վճարները:

2.4.3. Ժամկետից շուտ վճարելու դեպքում օգտվել ժամկետից շուտ վճարված գումարի 10% զեղչից: 2.4.4. Եթե ժամկետից շուտ կատարված վճարումը գերազանցում է 12 ամսվա վճարի մեծությունը օգտվել սահմանված վճարների 5% հավելյալ զեղչից:

3. Եզրափակիչ դրույթներ

3.1. Կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարել պատշաճ, միևնույն ժամանակ նպաստել մյուս կողմի պարտավորությունների կատարմանը՝ առաջարկելով աշխատանքների կազմակերպման հնարավոր ու արդյունավետ լուծման եղանակներ:

3.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

3.3 Պայմանագիրը հանվում է կնքված կողմերի ստորագրման պահից: Պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մեկ տարի, գործում է 2016թ. հունվարից: Այդ ժամկետը լրանալուց հետո, եթե կողմերից ոչ մեկը չի պահանջում պայմանագրի լուծում, ապա այն շարունակում է գործել:

3.4 Պայմանագրի լրացումները և փոփոխությունները իրավական ուժ ունեն և հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, եթե կատարվել են գրավոր և ստորագրվել են Պատվիրատուի և Կատարողի կողմից:

3.5 Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե վիճելի հարցի շուրջ համաձայնություն ձեռք չի բերվում, ապա դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

3.6 Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե ապացուցում են, որ սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարումը անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք է:

4.Կողմերի հասցեները

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
« Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ	ՀԱՍՑԵ ք. Գավառ Եղեգնաձոր 21
Ք Գավառ Օգոստոսի 23 փողոց թիվ 57	Բանկ Վերա-Ինվեստ Բանկ
«ՀՀ ֆին. նախ. գործառնական վարչություն»	ՀՀ 22008514032 9000
ՀՀ 900175101204	ՀՎՀՀ 08415304
ՀՎՀՀ 08406333	Հեռախոս 2-33-53
հեռախոս / 0264/ 2-23-38	ՏՆՕՐԵՆ
ՏՆՕՐԵՆ ՅՈՒ. ՄԻՆԱՍՅԱՆ	Կ.Տ
Կ.Տ	

Հավելված 1

«02» « հունվար » 2016թ. թիվ 0042 պայմանագրի

Սույն հավելվածով «Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում » համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (Կատարող)՝ ի դեմս կամակերպության տնօրեն Յուրիկ Մինասյանի և Պատվիրատու Դիլիջան քաղաքի բնակ. ՀՀ Գեղարքունիքի մարզ Վ.Գրիգորյանի 20
(իրավաբանական անձի , կազմակերպության, անհատ ձեռներեցի անվանումը)

կազմեցին սույն հավելվածը՝ աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցման վճարների վերաբերյալ:

Ղեկավարվելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքով, Գավառ քաղաքային համայնքի ավագանու որոշմամբ նման նշանակության շինությունների համար աղբահանության վճար է սահմանված շինության օգտագործվող յուրաքանչյուր քառակուսի մետրի համար ամսական 8 (ութ) ՀՀ դրամ:

Պատվիրատուն ունի 1125 (մեկ հազար հարյուր քսանհինգ) քառակուսի մետր օգտագործվող տարածք:

Պատվիրատուին մատուցվող աղբահանության ծառայության ամսական վճարը կազմում է՝ 10.000 (տասն հազար) ՀՀ դրամ:

Լրացուցիչ պատվերի դեպքում Պատվիրատուն պարտավորվում է մատուցվող ծառայության դիմաց վճարել տվյալ պահին կողմերի միջև ձեռք բերված ծառայության վարձավճարը, որը պետք է պակաս չլինի Գավառ համայնքի ավագանու կողմից նման ծառայության համար սահմանված վարձավճարի չափից:

Կատարողը Պատվիրատուին տրամադրում է 7 (յոթ) հատ աղբարկղ:

Պատվիրատուն պատասխանատվություն է կրում Կատարողի կողմից հատկացված աղբարկղերի հատկացման պահպանման համար: Աղբարկղերի կորստի կամ վնասվածքի դեպքում Պատվիրատուն Կատարողին յուրաքանչյուր կորած կամ վնասված աղբարկղի համար վճարում է 50 000 (հիսուն հազար)ՀՀ դրամ:

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
« Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ	ՀԱՍՑԵ Դիլիջան Վ.Գրիգորյան 20
Ք. Գավառ Օգոստոսի 23 փողոց թիվ 57	Բանկ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ
«ԳՀ ՖԻՆ. նախ. գործառնական վարչություն»	ՀՀ 2200 8514 0329 0000
ՀՀ 900175101204	ՀԿՀՀ 08411330.4
ՀԿՀՀ 08406333	Հեռախոս 2-390-47
հեռախոս / 02847 2-30-09	ՏՆՕՐԵՆ
ՏՆՕՐԵՆ ՅՈՒ. ՄԻՆԱՍՅԱՆ	Կ.Տ
Կ.Տ	

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(ի փոփոխություն 08 հունվարի 2016թ.-ին կնքված 0042 պայմանագրի)

ք. Գավառ «<<01>>Մարտ 2016թ.

„Գավառի բժշկական կենտրոն" ՀՊԸ (այսուհետ՝ ՊԱՏՎԻՐԱՏՈՒ) և «Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում»ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ ԿԱՏԱՐՈՂ), այսուհետ միասին կանվանվեն Կողմեր, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը համաձայնում են միմյանց միջև 08 հունվարի 2016թ.-ին կնքված թիվ _____ պայմանագրում (այսուհետ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Պայմանագրի 4-րդ գլուխը փոխել և վերաշարադրել հետևյալ բովանդակությամբ.

ԿԱՏԱՐՈՂ		ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ		„Գավառի ԲԿ" ՀՊԸ
ք. Գավառ Օգոստոսի 23/57		ք. Գավառ Օգոստոսի 21
Յունիբանկ ԲԲԸ Գավառ մ/ճ		Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գավառ մ/ճ
ՀՀ 24134000455500		հ/հ 22008314052900
ՀՎՀՀ 08417158		հշ/հ 08417304
Հեռախոս +374-264-2-30-09		2-33-53
Կանոնադրություն		
ՏՆՕՐԵՆ՝ ՅՈՒ. ՄԻՆԱՍՅԱՆ		ՀՊԸ-ի տնօրեն Ա. Քոչարյան
ստորագրություն		
		ստորագրություն

2.Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կնքման պահից: Պայմանագրի մյուս պայմանները մնում են անփոփոխ:

3.Համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակներից:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՎԱՎԵՐԱՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ		ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Գավառ քաղաքային համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ		„Գավառի ԲԿ" ՀՊԸ
ք. Գավառ Օգոստոսի 23/57		ք. Գավառ Օգոստոսի 21
Յունիբանկ ԲԲԸ Գավառ մ/ճ		Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ Գավառ մ/ճ
ՀՀ 24134000455500		հ/հ 22008314052900
ՀՎՀՀ 08417158		հշ/հ 08417304
Հեռախոս +374-264-2-30-09		
Կանոնադրություն		
ՏՆՕՐԵՆ՝ ՅՈՒ. ՄԻՆԱՍՅԱՆ		ՀՊԸ-ի տնօրեն Ա. Քոչարյան
ստորագրություն		
		ստորագրություն

Կարգ պայմանագրի